ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 106 – Ա **14 մայիսի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25 - Ի N 44 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.15-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների, դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2001 թվականի սեպտեմբերի 4-ի N 109-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Բոթոյան Կ.	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Համբարձումյան Հ.	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Բուդումյան Խ.	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
Ղուրշուդյան Մ.	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ
Գասպարյան Ս.	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ
Մելքոնյան Ս.	- «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ»-ի ղեկավար /համաձայնությամբ/

Պետրոսյան Ս. - ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

Ստեփանյան Հ. - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության Հյուսիսային միջմարզային բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/

Հազեյան Ն. - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Կոտայքի և Գեղարքունիքի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ